Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր 03

16. մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-11 պետական գնման պայմանագրի
Փոփոխություն N 3

*ք. Հրազդան* *27 դեկտեմբերի 2017թ.*

<<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը>>, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Լ.Պետրոսյանի, որը գործում է <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ**-ն, ի դեմս Ընկերության **տնօրեն Գ. Նիկողոսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-11 պետական գնման պայմանագրի 8.4 կետը և Գնումների գործընթացի կազմակերպման մասին Հայաստանի Հանրապետության 10 փետրվարի 2011 թվականի N168-Ն որոշումը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը ֆիքսեցին, որ Գառնիի համայնքի առողջության կենտրոնի շենքի վերանորոգման աշխատանքների համար նախատեսված 41400000 (քառասունմեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամից մինչև 19 դեկտեմբերի 2017թ-ը. որպես կատարողական ներկայացվել է 24814139 (քսանչորս միլիոն ութ հարյուր տասնչորս հազար հարյուր երեսունինը) դրամ և համաձայն 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-11 պետական գնման պայմանագրի 4.6 կետի վճարվել է 23576281 (քսաներեք միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար երկու հարյուր ութսունմեկ) դրամ ենթակա է կատարման 16582861 (տասնվեց միլիոն հինգ հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր վաթսունմեկ) դրամի աշխատանքներ, նախատեսվում է կանխավճար կապալառուին չվճարված 17823719 (տասնյոթ միլիոն ութ հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր տասնինը) որից 2070000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) դրամը համարվում է համաձայն պայմանագրերի 4.6 կետի աշխատանքների դիմաց չվճարված 5 տոկոսի գումար:

1.2 Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

1.3 Ուժը կորցրած ճանաչել 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-11 պայմանագրի 19 դեկտեմբերի 2017 թվականի N02 համաձայնագրի 1.1 և 1.2 կետերը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժան մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| --- | --- |
| <<ՀՀ Կոտայքի մարզ ք. Հրազդան Կենտրոն վարչական շենք>> | <<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ |
| Հ/Հ <<900001059444>> | ք.Երևան Շիրակի 82 |
| ՀՎՀՀ 03014577 | Հ/Հ 205122201069-1001 |
| | <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Տիգրան Մեծ մ/ճ |
| | ՀՎՀՀ 01829142 |
| ------------------------- (ստորագրություն) | ------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |